

Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների
պաշտպանի 2017 թվականի գործունեության, ինչպես նաև
մարդու իրավունքների և ազատությունների
պաշտպանության վիճակի մասին

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՇՈՒՇԻ

2018թ. մարտի 31

Բովանդակություն

Նախաբան.....	2
Բաժին 1. Արցախում մարդու իրավունքների պաշտպանության ամփոփ վիճակը և Պաշտպանի գործունեության ընդհանուր բնութագիրը.....	4
Բաժին 2. Պաշտպանի գործունեությունն՝ ըստ մարդու իրավունքների առանձին ոլորտների	13
2.1. Սոցիալական ապահովության իրավունք	13
2.2. Աշխատանքային իրավունքներ.....	14
2.3. Արդար դատաքննության իրավունք.....	14
2.4. Երեխաների իրավունքներ.....	15
2.5. Ազատ տեղաշարժվելու իրավունք.....	16
2.6. Առողջության պահպանման իրավունք.....	17
2.7. Պատշաճ վարչարարության իրավունք.....	17
2.8. Սեփականության իրավունք	18
2.9. Անձնական ազատության իրավունք	19
2.10. Այլ իրավունքներ.....	20
Բաժին 3. Պաշտպանի գործունեությունը հարկադիր պահման վայրերում	21
Բաժին 4. Պաշտպանի գործունեությունը հանրային իրազեկման ոլորտում	24
Բաժին 5. Պաշտպանի համագործակցությունը քաղաքացիական հասարակության հաստատությունների հետ	28
Բաժին 6. Արտաքին փոխգործակցությունը.....	30
6.1. Համագործակցությունը ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի հետ.....	30
6.2. Համագործակցությունը Սփյուռքի կառույցների հետ	31
6.3. Միջազգային համագործակցությունը	33
Եզրափակիչ նկատառումներ.....	39

Նախաբան

Սույն տարեկան հաղորդումը կազմված է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ԱՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 30-րդ հոդվածի հիման վրա, համաձայն որի՝ յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ՝ նաև Պաշտպան) Ազգային ժողով է ներկայացնում տարեկան հաղորդում՝ նախորդ տարվա իր գործունեության, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին: Պաշտպանը հաղորդումը ներկայացնում է նաև պետական իրավասու մարմիններին ու հասարակական կազմակերպություններին և հրապարակում զանգվածային լրատվության միջոցներով:

Սույն հաղորդման մեջ Օրենքով սահմանված տեղեկությունները ներկայացված են հիմք ընդունելով Պաշտպանի 2017 թվականի գործունեության ուղղությունները: Այդ դիտանկյունից, փաստաթղթում տեղ են գտել տեղեկություններ Արցախում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ընդհանուր վիճակի, առանձին ոլորտներում մարդու իրավունքների խախտումների, խնդիրների ու լուծումների վերաբերյալ, ինչպես նաև առաջարկություններ՝ ուղղված մարդու հիմնարար իրավունքների երաշխավորման մակարդակի բարձրացմանը: Փաստաթուղթը նաև պարունակում է ընդհանուր տեղեկատվություն տարբեր ուղղություններով Պաշտպանի իրականացրած գործունեության մասին:

Հաղորդումը մշակվել է հիմք ընդունելով քաղաքացիների բանավոր և գրավոր դիմումները, կամավորության հիման վրա կատարված հարցազրույցների ընթացքում հաղորդված տվյալները, իրավասու պետական մարմինների պարզաբանումները, ԱՀ օրենսդրության վերլուծությունը, Պաշտպանի և նրա աշխատակազմի ներկայացուցիչների կողմից անմիջականորեն ընկալված փաստերը, ինչպես նաև բաց աղբյուրների մշտադիտարկման արդյունքները:

Հաղորդումը բաղկացած է նախաբանից, 6 բաժիններից և եզրափակիչ նկատառումներից: Որոշ բաժիններ իրենց հերթին բաժանվում են ենթաբաժինների:

Առաջին բաժնում ներկայացվում է Արցախում մարդու իրավունքների պաշտպանության վիճակը և Պաշտպանի գործունեության ընդհանուր բնութագիրը, որը, ի թիվս այլ տեղեկատվության, ներառում է 2017թ. դիմումների վիճակագրական վերլուծությունը: Երկրորդ բաժնում վերլուծվում է Արցախում մարդու իրավունքների պաշտպանության վիճակն՝ ըստ մարդու իրավունքների առանձին ոլորտների՝ հիմք ընդունելով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում (այսուհետ՝ նաև Աշխատակազմ) ստացված դիմումները: Երրորդ բաժնում առանձին ներկայացվում է մարդու իրավունքների պաշտպանության վիճակը հարկադիր պահման վայրերում՝ հաշվի առնելով այդ հաստատություններում մարդու իրավունքների երաշխավորման առանձնահատուկ հանրային կարևորությունը: Չորրորդ բաժնում ներկայացվում է Պաշտպանի հաստատության՝ Մարդու իրավունքների վերաբերյալ հանրային իրազեկմանն ուղղված գործունեությունը: Հինգերորդ բաժնում ներկայացվում է քաղաքացիական հասարակության հաստատությունների հետ փոխգործակցությանն ուղղված գործունեությունը: Վեցերորդ բաժնում ներկայացվում են տեղեկություններ Պաշտպանի հաստատության արտաքին փոխգործակցության վերաբերյալ՝ ներառելով ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության, Սփյուռքի և միջազգային միջառք կառույցների հետ համագործակցության ուղղությամբ կատարված աշխատանքները:

Բաժին 1. Արցախում մարդու իրավունքների պաշտպանության ամփոփ վիճակը և Պաշտպանի գործունեության ընդհանուր բնութագիրը

1.1. 2017թ. փետրվարի 20-ին Արցախի Հանրապետությունում տեղի ունեցավ համապետական նշանակության իրավական միջոցառում՝ հանրաքվեով ընդունվեց ԱՀ նոր Սահմանադրությունը, ինչը որակական նոր մակարդակի վրա դրեց մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացվող քաղաքականությունը: Սահմանադրական բարեփոխումների արդյունքում ընդլայնվեց մարդու և քաղաքացու իրավունքների շրջանակը (անձնական տվյալների պաշտպանության իրավունք, առանձին դեպքերում դատապարտյալների ընտրական իրավունք, պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք, երեխայի իրավունքներ, պատշաճ վարչարարության իրավունք և այլն), նախատեսվեցին իրավունքների և ազատությունների համաչափ սահմանափակման երաշխիքներ, սահմանազատվեցին իրավունքների և ազատությունների ապահովման և պաշտպանության օրենսդրական երաշխիքներն ու պետության նպատակները՝ դրանք ամրագրելով առանձին գլուխներում:

1.2. Հանրաքվեին մասնակցելու իրավունքին, ինչպես նաև ՁԼՄ-ների մասնագիտական գործունեության ազատ իրականացմանը վերաբերող դիմումներին արագ արձագանքելու նպատակով հանրաքվեի անցկացման օրը Պաշտպանի աշխատակազմում գործել է «Թեժ գիծ»՝ «2017» անվճար կարճ հեռախոսահամարով: Հանրաքվեի օրը «Թեժ գծին» ստացվել է 3 զանգ՝ պարզաբանումներ ներկայացնելու խնդրանքով:

1.3. Պաշտպանը հանդիպումներ է ունեցել Արցախի Սահմանադրական հանրաքվեին դիտորդական առաքելություն իրականացնող միջազգային մի քանի դիտորդների հետ՝ քննարկելով առաջարկվող նախագծում առկա՝ մարդու իրավունքներին վերաբերող նոր

դրույթներին, օմբուդսմենի ինստիտուտի նոր կարգավիճակին, ինչպես նաև հանրաքվեի ընթացքին վերաբերող հարցեր:

1.4. Սահմանադրության ընդունմանը հաջորդել է Հիմնական օրենքին օրենսդրության համապատասխանեցման գործընթացը: 2017թ. մարտի 31-ին ԱՀ Նախագահի հրամանագրով, սահմանադրական բարեփոխումների գործընթացի կազմակերպման նպատակով, ստեղծվել է ԱՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների համակարգման խորհուրդ:

2017թ. մայիսի 29-ին խորհրդի կողմից հաստատվել է երկու ցանկ՝ (1) ԱՀ Սահմանադրության՝ օրենքով կարգավորման պահանջ ուղղակիորեն նախատեսող դրույթների հիման վրա ընդունման կամ փոփոխման ենթակա օրենքների՝ կազմված 39 օրենքից, (2) ԱՀ Սահմանադրության ընդունմամբ պայմանավորված՝ ընդունման կամ փոփոխման ենթակա օրենքների՝ կազմված 42 օրենքից:

Ողջունելի է, որ դրանցում, ի թիվս այլոց, ներառվել են նաև մարդու իրավունքների ոլորտին առնչվող բազմաթիվ օրենքներ: Մասնավորապես, 2018թ. ընթացքում ԱՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների համակարգման խորհրդին պետք է ներկայացվեն «ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Անձնական տվյալների պաշտպանության մասին», «ԼՂՀ ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», ««Երեխաների իրավունքների մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», ««Կրթության մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Խղձի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին», «Հավաքների ազատության մասին», ««Տեղեկատվության ազատության մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ազգային փոքրամասնությունների մասին», ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», ««Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ Սահմանադրությամբ՝ օրենքով

կարգավորման պահանջ ուղղակիորեն նախատեսող ԱՀ օրենքների նախագծերի համար: 2019թ. ընթացքում խորհրդին պետք է ներկայացվեն «Կուսակցությունների մասին», «Հասարակական կազմակերպությունների մասին», «Արհեստակցական միությունների մասին», «Անհատական և կոլեկտիվ հանրագրերի մասին», ԼՂՀ Աշխատանքային և Ընտրական օրենսգրքերի, ««Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», ««Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ օրենքների նախագծերը:

ԱՀ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը հանձնառություն է ստանձնել Պաշտպանի լիազորությունների շրջանակներում ակտիվորեն մասնակցելու մարդու իրավունքներին առնչվող օրինագծերի քննարկման գործընթացին:

1.5. Օրենքով կարգավորման պահանջ ուղղակիորեն նախատեսող դրույթների հիման վրա ընդունման կամ փոփոխման ենթակա օրենքների ցանկում ներառվել էր նաև «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ԱՀ օրենքը, որի նախագիծը, ԱՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատության մասնակցությամբ, սեղմ ժամկետում մշակվեց և ներկայացվեց ԱՀ Ազգային ժողով: Նախագիծը երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է 2017թ. դեկտեմբերի 21-ին:

Նոր օրենքը Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությանն ընձեռել է որակապես նոր հնարավորություններ, մասնավորապես.

ա) Մարդու իրավունքների պաշտպանի համար սահմանվել են խոշտանգումների կանխարգելման ազգային մեխանիզմին բնորոշ և վերաբերելի միջազգային պայմանագրերով նախատեսված բոլոր բովանդակային լիազորությունները,

բ) սահմանվել է մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ ակտերի մշակման փուլում դրանց կատարելագործմանը նպաստելու իրավական լայն գործիքակազմ,

զ) ամրագրվել են երեխաների իրավունքների երաշխավորմանը նպաստելու լրացուցիչ իրավական գործիքներ,

դ) հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանման հարցերը ներառվել են Պաշտպանի իրավասությանը ենթակա հարցերի շրջանակ,

ե) ընդարձակվել են Պաշտպանի հաստատության անկախության երաշխիքները,

զ) ամրագրվել է Պաշտպանի աշխատակազմի կառուցվածքային և գործառնական արդյունավետ մոդել, այն է՝ բովանդակային գործառույթ իրականացնող ստորաբաժանման՝ դեպարտամենտի և տեխնիկական գործառույթ իրականացնող ստորաբաժանման՝ քարտուղարության առանձնացում, ինչպես նաև՝ հասարակական հիմունքներով խորհրդականների ինստիտուտի ստեղծում:

1.6. 2016թ. տարեկան զեկույցում Պաշտպանը բարձրաձայնել էր մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարության մշակման ու ընդունման անհրաժեշտության մասին: Ողջունելի է, որ ԱՀ Նախագահի 2017-2020թթ. ծրագրում, ի թիվս ռազմավարական նշանակություն ունեցող այլ հարցերի, ներառվել է մարդու իրավունքների պաշտպանության համալիր ռազմավարության մշակման մասին դրույթ: ԱՀ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը հանձնառություն է ստանձնել Պաշտպանի լիազորությունների շրջանակներում ակտիվորեն մասնակցելու ռազմավարության մշակման գործընթացին:

1.7. Հաշվետու ժամանակահատվածում ԱՀ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության գործունեությունը շարունակել է ուղղված լինել Արցախում մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորմանը, կանխարգելիչ բնույթի միջոցառումների իրականացմանը, հանրության շրջանում մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը, Արցախի քաղաքացիական հասարակության կառույցների, ԱՀ հանրային իշխանության մարմինների, ինչպես նաև՝

Հայաստանի Հանրապետության, Սփյուռքի և միջազգային գործընկերների հետ համագործակցության իրականացմանն ու ամրապնդմանը:

1.8. Պաշտպանի գործունեությունը հիմնվում է իրավունքների և ազատությունների պահպանմանը հետևելու Սահմանադրական գործառույթի վրա, որն առավելապես իրականացվում է անհատական դիմումների քննարկման միջոցով: Դիմում-բողոքների մանրամասն վիճակագրությունը ներկայացվում է «Աղյուսակ 1»-ում և «Աղյուսակ 2»-ում:

1.9. Հաշվետու տարում Աշխատակազմը 150 անձանցից ստացել է 119 դիմում, որից 55-ը՝ գրավոր, 64-ը՝ բանավոր: Դիմումների և դիմումատուների քանակական տարբերությունը պայմանավորված է կոլեկտիվ դիմումներ ստանալու փաստով:

1.10. Աղյուսակ 1-ում պատկերված է դիմումների և դիմումատուների քանակական պատկերն՝ ըստ դիմումատուների աշխարհագրության:

Աղյուսակ 1. Դիմումների և դիմումատուների քանակական պատկերն՝ ըստ դիմումատուների աշխարհագրության

N	Դիմումատուների աշխարհագրությունը	Դիմումների քանակը	Տոկոսային հարաբերությունը դիմումների ընդհանուր քանակի նկատմամբ	Դիմումատուների թվաքանակը	Տոկոսային հարաբերությունը դիմումատուների ընդհանուր թվաքանակի նկատմամբ
1.	Ստեփանակերտ	34	28.6%	62	41.3%
2.	Շուշիի շրջան	13	10.8%	13	8.7%
3.	Մարտակերտի շրջան	12	10%	12	8%
4.	Քաշաթաղի շրջան	10	8.4%	10	6.7%
5.	Շահումյանի շրջան	9	7.6%	12	8%
6.	Մարտունու շրջան	8	6.7%	8	5.4%

7.	Ասկերանի շրջան	6	5%	6	4%
8.	Հաղրութի շրջան	5	4.3%	5	3.3%
9.	Հայաստանի Հանրապետություն	17	14.3%	17	11.3%
10.	Այլ պետություններ	5	4.3%	5	3.3%
	Ընդամենը	119	100%	150	100%

Համեմատելով 2016թ. դիմումատուների և նրանցից ստացված դիմումների ընդհանուր քանակը՝ կարելի է նշել, որ հաշվետու տարում քանակական լուրջ փոփոխություններ չեն արձանագրվել: Առավել շատ դիմումներ են ստացվել Ստեփանակերտ քաղաքի բնակիչներից: Որոշ դեպքերում փոփոխություններ են նկատվել տարբեր վարչատարածքային միավորներից Պաշտպանին հասցեագրված դիմումների քանակական համամասնության մեջ: Այսպես, օրինակ, կոլեկտիվ դիմումներով պայմանավորված՝ 2016թ.-ին Ստեփանակերտ քաղաքի 34 բնակիչներից ստացվել էր 33 դիմում, իսկ 2017թ.-ին՝ 62 դիմումատուներից՝ 34 դիմում: Մարտակերտի շրջանից 2016թ.-ին ստացվել էր 9 դիմում 49 անձից, իսկ 2017թ.-ին՝ 12 դիմում 12 անձից:

Աճել է Շուշիի, Քաշաթաղի և Շահումյանի շրջանների բնակիչներից ստացված դիմումների քանակը:¹

1.11. Աղյուսակ 2-ում ներկայացված է դիմումատուների քանակական պատկերն՝ ըստ դիմումների բովանդակության:

¹ Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցը 2016 թվականի ընթացքում Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտումների վերաբերյալ», 31 մարտի, 2017թ., էջ 6, հղում՝ http://ombudsnkr.am/reports_2016.pdf (վերջին մուտքը՝ 23 մարտի, 2018թ.):

Աղյուսակ 2. Դիմումատուների քանակական պատկերն՝ ըստ դիմումների բովանդակության

N	Դիմումի թեման	Քանակը	Տոկոսը
1.	Սոցիալական ապահովության և բավարար կենսամակարդակի ապահովման իրավունք	20	16.8%
2.	Աշխատանքային իրավունքներ	14	11.8%
3.	Արդար դատաքննության իրավունք	12	10%
3.	Երեխաների իրավունքներ	11	9.2%
4.	Քաղաքացիության և ազատ տեղաշարժվելու իրավունք	10	8.4%
5.	Առողջության պահպանման իրավունք	9	7.6%
6.	Պատշաճ վարչարարության իրավունք	7	5.8%
7.	Սեփականության իրավունք	5	4.4%
9.	Անձնական ազատության իրավունք	3	2.5%
10.	Այլ իրավունքներ	28	23.5%

Ինչպես 2016թ.-ին, այնպես էլ հաշվետու տարում Պաշտպանին առավել հաճախ դիմել են սոցիալական ապահովության, աշխատանքային, արդար դատաքննության, երեխաների իրավունքներին առնչվող հարցերով: Աճել են արդար դատաքննության, քաղաքացիության և ազատ տեղաշարժվելու, սոցիալական ապահովության, ընտանիքի և երեխաների իրավունքներին վերաբերող դիմումների քանակը, նվազել՝ սեփականության և աշխատանքային իրավունքներին վերաբերող դիմումները:

Ի տարբերություն 2016թ.-ի՝ հաշվետու տարում դիմումներ չեն ստացվել կյանքի և կրթության իրավունքների խախտման վերաբերյալ:²

² Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցը 2016 թվականի ընթացքում Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու»

1.12. Պաշտպանի գործունեության ուղղություններից է կանխարգելումը, որն արտահայտվում է մշտադիտարկման նպատակով այցելությունների իրականացմամբ, վեր հանված խնդիրների բարձրաձայնմամբ: Հաշվետու տարում Պաշտպանը շարունակել է ուշադրության կենտրոնում պահել հարկադիր պահման վայրերում գտնվող անձանց իրավունքների պաշտպանության հարցը: Հարկ է ընդգծել, որ նոր օրենքը Պաշտպանի համար լրացուցիչ հնարավորություններ է սահմանել, որոնք բխում են կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակից:

1.13. Հաշվետու տարում Պաշտպանը շարունակել է ակտիվ գործունեությունն՝ ուղղված մարդու իրավունքների վերաբերյալ հանրության տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը: Նշված գործառույթի իրականացումն ապահովվել է երկու եղանակով՝ անմիջական հանդիպումների և զանգվածային լրատվամիջոցների հետ աշխատանքի միջոցով: Բացի դրանից, Պաշտպանը մասնակցություն է ունեցել Արցախի պետական համալսարանում իրավաբանական կլինիկայի հիմնադրման աշխատանքներին, որը, սերտ համագործակցելով Պաշտպանի հաստատության հետ, 2017թ. նոյեմբերի 1-ից ի վեր, անվճար իրավաբանական խորհրդատվություն է տրամադրում քաղաքացիներին:

1.14. Հաշվետու տարում Մարդու իրավունքների պաշտպանը գործունեություն է ծավալել ներքին և արտաքին հարաբերություններում համագործակցության ամրապնդման ուղղությամբ: Այդ տեսանկյունից, կարևորում ենք աշխատանքն Արցախի քաղաքացիական հասարակության կառույցների, ԱՀ պետական իշխանության մարմինների, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատության հետ, ինչպես նաև արտաքին գործընկերների և հայկական Սփյուռքի կառույցների հետ համատեղ ծրագրերի նախանշումն ու իրականացումը՝ ուղղված Արցախում մարդու իրավունքների երաշխավորմանը:

1.15. Պաշտպանի աշխատակազմը շարունակել է Ադրբեջանում հայաստանյացության քաղաքականության վերաբերյալ նոր զեկույցի մշակման աշխատանքները՝ կոնկրետ

իրավունքների և հիմնարար ազատությունների խախտումների վերաբերյալ», 31 մարտի, 2017թ., էջ 7, հղում՝ http://ombudsnkr.am/reports_2016.pdf (վերջին մուտքը՝ 23 մարտի, 2018թ.):

քայլեր ձեռնարկելով թե՛ փաստահավաք գործունեության և թե՛ իրավական վերլուծության ուղղությամբ: Հետազոտության արդյունքները Պաշտպանի կողմից կներկայացվեն ընթացիկ տարում: Տվյալ աշխատանքները հիմնվել են նաև Պաշտպանի նախորդ զեկույցների՝ «Ադրբեջանական զինված ուժերի կողմից Լեռնային Ղարաբաղի խաղաղ բնակչության և պաշտպանության բանակի զինվորների նկատմամբ ս.թ. ապրիլի 2-5-ն ընկած ժամանակահատվածում կատարված դաժանությունների մասին»,³ «Իրավական գնահատական. Խաղաղ բնակչությանը՝ որպես վահան օգտագործելու փաստի և ԼՂՀ խաղաղ բնակչության դեմ Ադրբեջանի զինված ուժերի հարձակումների մասին»⁴ և «Ապրիլյան պատերազմում Ադրբեջանի կատարած ռազմական ծանր հանցանքների վերաբերյալ»⁵ վրա:

³ Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, ԼՂՀ Մարդու իրավունքների պաշտպանի միջանկյալ զեկույցը՝ «Ադրբեջանական զինված ուժերի կողմից Լեռնային Ղարաբաղի խաղաղ բնակչության և պաշտպանության բանակի զինվորների նկատմամբ ս.թ. ապրիլի 2-5-ն ընկած ժամանակահատվածում կատարված դաժանությունների մասին», 22 ապրիլի, 2016թ., հղում՝ http://ombudsnkr.am/Interim_Public_Report_NKR_Omb_FINAL.pdf (վերջին մուտքը՝ 22 մարտի, 2018թ.):

⁴ Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, ԼՂՀ մարդու իրավունքների պաշտպանի միջանկյալ զեկույցը՝ «Իրավական գնահատական. Խաղաղ բնակչությանը՝ որպես վահան օգտագործելու փաստի և ԼՂՀ խաղաղ բնակչության դեմ Ադրբեջանի զինված ուժերի հարձակումների մասին», 02 մայիսի, 2016թ., հղում՝ http://ombudsnkr.am/Legal_Assessment_May_2_human_shielding_use_of_indiscriminate_weapons_FINAL.pdf (վերջին մուտքը՝ 22 մարտի, 2018թ.):

⁵ Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցը՝ «Ապրիլյան պատերազմում Ադրբեջանի կատարած ռազմական ծանր հանցանքների վերաբերյալ», 09 դեկտեմբերի, 2016թ., հղում՝ http://www.ombudsnkr.am/en/docs/Report_PUBLIC.pdf (վերջին մուտքը՝ 22 մարտի, 2018թ.):

Բաժին 2. Պաշտպանի գործունեությունն՝ ըստ մարդու իրավունքների առանձին ոլորտների

2.1. Սոցիալական ապահովության իրավունք

2.1.1. ԱՀ Սահմանադրության 82-րդ հոդվածը սոցիալական ապահովությունը հռչակում է որպես պետության քաղաքականության հիմնական նպատակ՝ սահմանելով, որ յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք:

2.1.2. Աշխատակազմը հաշվետու տարում ոլորտին առնչվող 20 դիմում է ստացել: Դիմումները, որպես կանոն, առնչվել են կենսաթոշակների ու պետական նպաստների տրամադրման և բնակարանային ապահովման հարցերին: Մասնավորապես, դիմումների զգալի հատվածը վերաբերել է վերաբնակեցված ընտանիքներին բնակարան-բնակելի տուն տալու կարգին և այդ ընտանիքների կողմից դրանք հանձնելու հիմքերին:

2.1.3. Վերաբնակեցված ընտանիքների հետ կնքվող բնակարան-բնակելի տուն տալու մասին պայմանագրերում առկա է դրույթ, համաձայն որի՝ 3 ամիս և ավելի բացակայելու դեպքում ընտանիքը պարտավորվում է հանձնել բնակարանը, սակայն այդ ժամկետը հարգելի ճանաչելու համար օրենքը որևէ ընթացակարգ չի նախատեսում: Պաշտպանն արձանագրում է, որ բացակայության ժամկետի հարգելի ճանաչման վերաբերյալ իրավակարգավորման բացակայությունը կարող է հանգեցնել վերաբնակվող ընտանիքների անդամների իրավունքների խախտման:

2.1.4. ԱՀ-ում բնակվող Ուզբեկստանի քաղաքացին Պաշտպանին հասցեագրել էր դիմում՝ պնդելով, որ իր կենսաթոշակ ստանալու իրավունքը խախտվել է: Դիմումի քննարկման արդյունքում պարզ է դարձել, որ կենսաթոշակ ստանալու նրա իրավունքը դադարեցվել է հիմք ընդունելով «Պետական կենսաթոշակների մասին» ԼՂՀ օրենքի 41-րդ հոդվածի 6-րդ

կետը, համաձայն որի՝ կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի՝ ԱՀ-ում բնակվելու իրավունքը դադարելու դեպքում: Դիմումատուին անհրաժեշտ աջակցություն և իրավաբանական խորհրդատվություն է ցուցաբերվել կացության կարգավիճակ ձեռք բերելու ընթացակարգի վերաբերյալ: Որոշ ժամանակ անց դիմումատուն տեղեկացրել է, որ կենսաթոշակ ստանալու իր իրավունքը վերականգնվել է:

2.2. Աշխատանքային իրավունքներ

2.2.1. ԱՀ Սահմանադրության 57-րդ հոդվածը հռչակում է աշխատանքի ընտրության ազատությունը և աշխատանքային իրավունքները, իսկ 81-րդ հոդվածը նախատեսում է պատշաճ աշխատանքային պայմանների ապահովումը՝ որպես պետության քաղաքականության հիմնական նպատակ:

2.2.2. Հաշվետու տարում Պաշտպանին հասցեագրված համապատասխան դիմումները վերաբերել են հիմնականում հանրային ոլորտին: Խախտումների գլխավոր պատճառը շարունակում է մնալ գործատուի կողմից օրենսդրության ոչ պատշաճ կիրառությունը: Դիմումների հիմնական մասն առնչվել է աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ կապված հարցերին:

2.3. Արդար դատաքնության իրավունք

2.3.1. ԱՀ Սահմանադրության 63-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք: Արդար դատաքնության իրավունքն առանցքային տեղ է զբաղեցնում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության և ապահովման երաշխիքների համակարգում:

2.3.2. Հաշվետու տարում Աշխատակազմը ստացել է դատական համակարգին առնչվող 12 դիմում: Դրանցում բարձրացված հարցերի շարքում շարունակում է գերակայող մնալ ողջամիտ ժամկետում գործի քննության խնդիրը: Դիմումներն ընթացքավորվել են և ստացել համապատասխան լուծումներ: Զգալի մասի դեպքում դիմումատուներին

ներկայացվել են իրենց իրավունքների պաշտպանության հնարավորությունները, քանի որ օրենքը Պաշտպանի համար սահմանում է դատական վարույթին միջամտելու արգելք:

2.3.3. 2017 թվականին Աշխատակազմը մշակել է նոր աշխատակարգ, որով կարգավորել է այն դատական նիստերին ներկայություն ապահովելու գործընթացը, որոնք առնչվում են դիմումատուի իրավունքներին կամ դիմումում ներկայացված հարցերին:

2.3.4. Հավատարիմ լինելով 2017 թվականի մայիսի 5-ին CivilNet առցանց հեռուստատեսության վերլուծական հաղորդաշարում հրապարակված արտահայտված դիրքորոշմանը՝ Պաշտպանը հրավիրում է ԱՀ իրավասու պետական մարմինների ուշադրությունն այն հարցին, որ ԱՀ քրեադատավարական օրենսդրությամբ բավարար չափով սահմանված չեն կառուցակարգեր՝ ապահովելու տուժողի հնարավորությունը արդյունավետորեն ներագրելու դատարանում քննվող ենթադրյալ հանցանքի վերջնական որակմանը: Այդպիսի կառուցակարգերի սահմանումը կընդլայնի արդար դատաքննության իրավունքի օրենսդրական երաշխիքները:

2.4. Երեխաների իրավունքներ

2.4.1. ԱՀ նոր Սահմանադրությունը լրացուցիչ երաշխիքներ է ամրագրում՝ նպատակաուղղված երեխաների իրավունքների պաշտպանության արդյունավետ իրականացմանը: Մասնավորապես, ԱՀ Սահմանադրության 37-րդ հոդվածով ամրագրվել են երեխայի կողմից իր կարծիքն ազատ արտահայտելու, ծնողների հետ կանոնավոր անձնական փոխհարաբերություններ և անմիջական շփումներ պահպանելու իրավունքները, ինչպես նաև սահմանվել է, որ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները պետության հոգածության և պաշտպանության ներքո են: Բացի այդ, 36-րդ հոդվածով սահմանվել է, որ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, կրթության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման մասին, իսկ ծնողական իրավունքներից զրկելը կամ դրանց

սահմանափակումը կարող է կատարվել միայն օրենքով՝ դատարանի որոշմամբ՝ երեխայի կենսական շահերն ապահովելու նպատակով:

2.4.2. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» 2017թ. դեկտեմբերի 21-ին ընդունված օրենքը սահմանել է Պաշտպանի լիազորությունները երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում, մասնավորապես՝ Պաշտպանի՝ առանց նախապես այցելության ժամի և նպատակի մասին տեղեկացնելու պարբերական և ըստ անհրաժեշտության երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, ինչպես նաև՝ հանրակրթական ուսումնական հաստատություններ անարգել այցեր կատարելու, երեխայի իրավունքներին առնչվող հատուկ հրապարակային զեկույցներով հանդես գալու, իրավասու մարմիններ երեխաների իրավունքներին վերաբերող իրավական ակտերի կամ դրանց նախագծերի կամ պրակտիկայի կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու իրավունքները:

2.4.3. Հաշվետու տարում Աշխատակազմը ոլորտին առնչվող 11 դիմում է ստացել: Ինչպես և նախորդ տարիներին, դրանք հիմնականում վերաբերել են ծնողներից որևէ մեկի կողմից երեխայի դաստիարակությանը չմասնակցելուն, ալիմենտային պարտավորությունները կատարելուց խուսափելուն կամ անբարեխիղճ կատարելուն:

2.5. Ազատ տեղաշարժվելու իրավունք

2.5.1. ԱՀ Սահմանադրության 40-րդ հոդվածը սահմանում է, որ Արցախի Հանրապետության տարածքում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք:

2.5.2. Հաշվետու տարում Աշխատակազմը ստացել է ոլորտին առնչվող 10 դիմում: Դրանց մի մասի դեպքում տրվել է իրավաբանական խորհրդատվություն՝ քաղաքացիություն և կացության կարգավիճակ ձեռք բերելու ընթացակարգի վերաբերյալ:

2.5.3. Ոլորտին առնչվող դիմումների զգալի մասը վերաբերել է հաշվառման վայրը փոխելու հարցերին: Դիմումների մի մասի քննությունը դեռ ընթացքի մեջ է:

2.6. Առողջության պահպանման իրավունք

2.6.1. ԱՀ Սահմանադրության 84-րդ հոդվածը հռչակում է յուրաքանչյուրի, օրենքին համապատասխան, առողջության պահպանման իրավունքը:

2.6.2. Հաշվետու տարում առողջության պահպանման իրավունքի վերաբերյալ Աշխատակազմը ստացել է 9 դիմում, որոնք առնչվել են հարկադիր պահման վայրերում գտնվող անձանց և զինծառայողների առողջության պահպանման իրավունքի պատշաճ իրացման հարցերին: Ստացված դիմումներին տրվել է համապատասխան ընթացք, ինչի արդյունքում կատարվել են լրացուցիչ հետազոտություններ և համապատասխան բժշկական միջամտություններ:

2.6.3. Զինծառայողներին վերաբերող դիմումներ ստանալու դեպքում Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները, որպես կանոն, անձամբ հանդիպումներ են ունենում սվյալ զինծառայողների և պատասխանատու անձանց հետ՝ դիմումում ներկայացված փաստերի վերաբերյալ տեղեկություններ և պարզաբանումներ ստանալու նպատակով:

2.7. Պատշաճ վարչարարության իրավունք

2.7.1. Նոր Սահմանադրությունը մարդու հիմնական իրավունքների և ազատությունների տեսանկյունից սահմանադրական մակարդակում առաջին անգամ նախատեսել է պատշաճ վարչարարության իրավունքը՝ սահմանելով, որ յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

2.7.2. Աշխատակազմը հաշվետու տարում ստացել է ոլորտին առնչվող 7 դիմում, որոնք հիմնականում վերաբերել են օրենքով սահմանված ժամկետում քաղաքացիների դիմումներին գրավոր պատասխան տալու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց պարտականությանը: Պաշտպանի գրություններին ի պատասխան՝ որպես կանոն, նշյալ մարմիններից պարզաբանել են, որ քաղաքացուն տրվել է բանավոր պատասխան:

2.7.3. Պաշտպանին հասցեագրած դիմումներից մեկում քաղաքացին պնդում էր, որ դիմում է ներկայացրել Ստեփանակերտի քաղաքապետարան՝ տեղական արտադրողների համար արտաքին գովազդի տեղադրման դիմաց տեղական տուրքի արտոնություն սահմանելու խնդրանքով, սակայն ավելի քան երկու ամիս դիմումի պատասխանը չի ստացել: Բողոքը քննարկման ընդունելուց հետո համապատասխան գրություն է հասցեագրվել ԱՀ Ստեփանակերտի քաղաքապետարան՝ դիմումում ներկայացված փաստերի իսկությունը ստուգելու և պարզաբանումներ ստանալու նպատակով, ինչից հետո Քաղաքապետարանը քաղաքացուն ներկայացրել է վերջինիս դիմումի գրավոր պատասխան:

2.8. Սեփականության իրավունք

2.8.1. ԱՀ Սահմանադրության 10-րդ հոդվածը սահմանում է, որ Արցախի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը, իսկ 60-րդ հոդվածը երաշխավորում է յուրաքանչյուրի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքը:

2.8.2. Հաշվետու տարում Աշխատակազմը ստացել է սեփականության իրավունքին վերաբերող 5 դիմում: Ստացված դիմումների վերլուծությունը ցույց է տալիս, որ առավել հաճախ խախտումներ արձանագրվում են սեփականության իրավունքի պաշտպանության ռեժիմի տակ ընկնող օրինական ակնկալիքի ոլորտում:

2.8.3. 2017թ. ստացված դիմումները, որպես կանոն, առնչվել են կենսաթոշակների ու պետական նպաստների, ինչպես նաև վերաբնակեցման ծրագրով բնակարան-բնակելի տուն սեփականության իրավունքով ձեռք բերելու օրինական ակնկալիքի հարցերին:

2.8.4. Հիմք ընդունելով Պաշտպանի աշխատակազմում դիմումների քննարկման շրջանակներում իրականացված վերլուծությունները՝ Պաշտպանն իրավասու պետական մարմինների ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքին, որ Սահմանադրությամբ երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է ոչ

միայն այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, այլն այն անձանց, ովքեր տվյալ գույքի նկատմամբ ունեն հետագայում սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք: Օրինական ակնկալիքի չափորոշիչները սահմանված են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանությամբ, որի համաձայն՝ ակնկալիքն օրինական է, եթե այն հիմնված է իրավաբանորեն պարտադիր նորմատիվ ակտի վրա, իսկ վերջինիս իրավակարգավորումները հստակ են և իրավակիրառական պրակտիկայում կանխատեսելի:

2.8.5. Հիմք ընդունելով Պաշտպանի աշխատակազմում դիմումների քննարկման շրջանակներում իրականացված վերլուծությունները՝ Պաշտպանն իրավասու պետական մարմինների ուշադրությունն է հրավիրում նաև այն հանգամանքին, որ ԱՀ Սահմանադրությամբ և օրենսդրությամբ ամրագրված՝ հանրային գերակա շահի նկատառումներով սեփականության օտարման ոլորտում իրավակիրառական պրակտիկան անհրաժեշտ է լիարժեքորեն համապատասխանեցնել ներպետական և միջազգային չափորոշիչներին:

2.9. Անձնական ազատության իրավունք

2.9.1. ԱՀ Սահմանադրության 27-րդ հոդվածն ամրագրում է անձնական ազատությունից զրկելու հիմքերը և տևողությունը՝ սահմանելով, որ յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան Սահմանադրությամբ նախատեսված դեպքերում և օրենքով սահմանված կարգով:

2.9.2. Հաշվետու տարում Աշխատակազմը ստացել է անձնական ազատությանն առնչվող 3 դիմում, որոնք վերաբերել են խափանման միջոցի կիրառման հարցերին:

2.9.3. Հիմք ընդունելով Պաշտպանի աշխատակազմում դիմումների քննարկման շրջանակներում իրականացված վերլուծությունները՝ Պաշտպանն իրավասու պետական մարմիններին առաջարկում է մինչդատական վարույթում անձին ազատությունից զրկելու և անազատության մեջ պահելու հարցերը կանոնակարգող օրենսդրությունը ԱՀ

Սահմանադրությանը համապատասխանեցնելիս ու լրամշակելիս, ինչպես նաև համապատասխան իրավակիրառական պրակտիկա ձևավորելիս հաշվի առնել խնդրո առարկայի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի կողմից վերջին շրջանում արտահայտված նոր իրավական դիրքորոշումները, հատկապես՝ Բուզաձի⁶ և Մերաբիշվիլի⁷ գործերով:

2.10. Այլ իրավունքներ

2.10.1. Սույն ենթաբաժնի մեջ ներառվել են այն դիմումները, որոնք վերաբերել են՝ Սահմանադրությամբ երաշխավորված՝ սպառողների իրավունքներին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործողություններին առնչվող որոշ իրավունքների, մասնավոր կազմակերպություններում քաղաքացիների իրավունքներին:

2.10.2. Դիմումների մի հատված էլ առնչվել է մասնավոր ոլորտում քաղաքացիների իրավունքների պաշտպանությանը: Քանի որ Պաշտպանն այդ դիմումները քննարկման ընդունելու իրավասություն չունի, քաղաքացիներին տրվել է անհրաժեշտ իրավաբանական խորհրդատվություն:

2.10.3. Այն դեպքերում, երբ քաղաքացու բարձրաձայնած խնդիրը ենթակա չէ Պաշտպանի կողմից քննարկման, քաղաքացիները նաև հաճախ ուղղորդվել են ԱրՊՀ իրավաբանական կլինիկա, որտեղ նրանք կարող են ստանալ անվճար իրավաբանական օգնություն, ներառյալ՝ դատական ներկայացուցչություն: Այս առումով, Պաշտպանի աշխատակազմը սերտորեն համագործակցում է ԱրՊՀ իրավաբանական կլինիկայի հետ:

⁶ Buzadji v. Moldova գործով (դիմում թիվ 23755/07) Մեծ պալատի 2016թ. հուլիսի 5-ի վճիռը, 84-102-րդ կետեր, հղումը՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-164928> (վերջին մուտքը՝ 23 մարտի, 2018թ.):

⁷ Merabishvili v. Georgia գործով (դիմում թիվ 72508/13) Մեծ պալատի 2017թ. նոյեմբերի 28-ի վճիռը, 265-317-րդ կետեր, հղում՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-178753> (վերջին մուտքը՝ 23 մարտի, 2018թ.):

Բաժին 3. Պաշտպանի գործունեությունը հարկադիր պահման վայրերում

3.1. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» 2017թ. դեկտեմբերի 21-ին ընդունված նոր օրենքը Պաշտպանին օժտում է խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման ազգային մեխանիզմին բնորոշ լիազորություններով: Այդ լիազորությունները ենթադրում են ազատությունից զրկման վայրեր, այդ թվում՝ դրանց հարակից շինություններ կամ կառույցներ պարբերական, ինչպես նաև ըստ անհրաժեշտության այցերի իրականացում: Օրենքի իմաստով ազատությունից զրկման վայրեր են համարվում՝ ձերբակալված և կալանավորված անձանց պահելու վայրերը, քրեակատարողական հիմնարկները, հոգեբուժական կազմակերպությունները, կայազորային կարգապահական մեկուսարանները, ազատությունից զրկված անձանց տեղափոխելու համար նախատեսված տրանսպորտային միջոցները, ցանկացած այլ վայր, որտեղ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի որոշմամբ, հրամանով կամ ցուցումով, նրա համաձայնությամբ կամ թույլտվությամբ անձը զրկվել է կամ կարող է զրկված լինել ազատությունից, ինչպես նաև՝ ցանկացած այնպիսի վայր, որն անձը չի կարող ինքնակամ լքել առանց դատարանի, վարչական կամ այլ մարմնի կամ պաշտոնատար անձի որոշման կամ թույլտվության:

3.2. Հայտնի դարձած տեղեկությունների արդյունքում Պաշտպանը կարող է իրավասու մարմիններին և կազմակերպություններին ներկայացնել առաջարկություններ՝ ազատությունից զրկման ցանկացած վայրում գտնվող անձանց պահման պայմանները բարելավելու, ինչպես նաև՝ խոշտանգումները և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը կանխարգելելու նպատակով, ինչպես նաև՝ իրավասու մարմիններին ներկայացնել իրավական ակտերի կամ դրանց նախագծերի վերաբերյալ առաջարկություններ:

3.3. 2017թ. ընթացքում Պաշտպանը և Աշխատակազմի ներկայացուցիչները պարբերական այցեր են իրականացրել «Շուշի» քրեակատարողական հիմնարկ՝ ուսումնասիրելով կալանավորների և դատապարտյալների պահման պայմանները, ինչպես նաև առանձնագրույցներ ունենալով նրանց և նշյալ հաստատության աշխատակիցների հետ: 2017թ. մարտին «Շուշի» ՔԿՀ բոլոր երեք ռեժիմների տարածքում տեղադրվել են փոստարկղեր՝ անմիջականորեն Պաշտպանին ուղղված դիմումների հավաքագրման համար: Փոստարկղերին հասանելիություն ունեն բացառապես Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները, որոնք պարբերաբար այցելել են քրեակատարողական հիմնարկ՝ փոստարկղերը բացելու և դիմում-բողոքները ստանալու նպատակով:

3.4. 2017թ. հուլիսի 18-ին «Ղարաբաղյան հակամարտության գոտում անհայտ կորածների որոնման և պատանդների ու գերիների ազատ արձակման միջազգային աշխատանքային խմբի» համանախագահների խնդրանքով՝ Պաշտպանը, ԱՀ օրենսդրությամբ սահմանված իր մանդատի շրջանակներում, նրանց համար հնարավորություն է ստեղծել «Շուշի» ՔԿՀ-ում ծանոթանալու ադրբեջանցի երկու դատապարտյալների պատիժը կրելու պայմաններին, ինչպես նաև Պաշտպանի հետ միասին տեսակցելու նրանց:⁸

3.5. Պաշտպանը գոհունակությամբ արձանագրում է, որ հաշվետու տարում շահագործման է հանձնվել «Շուշի» ՔԿՀ այցելուների համար նախատեսված սպասարահ, ինչպես նաև հիմնանորոգվել է հիմնարկի խոհանոցը:

3.6. Հաշվետու տարում քրեակատարողական հիմնարկում գտնվող անձանցից ստացած դիմումներն առնչվել են դատապարտյալների պայմանական վաղաժամկետ ազատման և առողջության պահպանման իրավունքի հարցերին:

⁸ Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «Արցախի ՄԻՊ – ն ընդունել է «Ղարաբաղյան հակամարտության գոտում անհայտ կորածների որոնման և պատանդների ու գերիների ազատ արձակման միջազգային աշխատանքային խմբի» համանախագահներին», 19 հուլիսի, 2017թ., հղում՝ <http://ombudsokr.am/news.php?nid=25> (վերջին մուտքը՝ 28 մարտի, 2018թ.):

3.7. Պաշտպանն ընդգծում է, որ առաջիկա տարիներին օգտագործելու է օրենքով սահմանված նոր գործիքակազմը՝ հետևողական լինելով ոչ միայն քրեակատարողական հիմնարկում, այլև հոգեբուժական հաստատություններում և հարկադիր պահման այլ վայրերում գտնվող անձանց իրավունքների պաշտպանության հարցում՝ ակնկալելով նաև քաղաքացիական հասարակության գործուն անդամներին:

Բաժին 4. Պաշտպանի գործունեությունը հանրային իրազեկման ոլորտում

4.1. Հաշվետու տարում հանրային իրազեկման գործիքակազմը ներառել է իրավական մշակույթի մակարդակի բարձրացմանը վերաբերող տարբեր հիմնահարցերի ներկայացումը և քննարկումը հեռուստատեսությամբ, ռադիոյով, տպագիր և առցանց մամուլով, սոցիալական ցանցերով, տարբեր ձևաչափերով հանդիպումները երիտասարդության ու այլ խմբերի հետ, մարդու իրավունքներին վերաբերող մրցույթի անցկացումը:

4.2. 2017թ. ընթացքում Պաշտպանը տարբեր ձևաչափերով ավելի քան 30 հանրային հաղորդակցություն է իրականացրել հեռուստատեսությամբ, ռադիոյով, տպագիր և առցանց մամուլով: Մասնավորապես՝ Պաշտպանը հյուրընկալվել է Արցախի հանրային հեռուստատեսության «Ռոջույն Արցախ» հաղորդաշարին (11.12.2017թ.)⁹, «Երկիր մեղիա» հեռուստաընկերության «Երկրի հարցը» հաղորդաշարին (15.12.2017թ.)¹⁰, «Առաջին լրատվական»-ին (25.03.2017թ.)¹¹ և (19.07.2017թ.)¹², «Միվիլներ»-ի վերլուծական թողարկմանը (05.05.2017թ.)¹³, «Արարատ» հեռուստաընկերության «Հայլուր-գրույց» հաղորդաշարին (24.06.2017թ.)¹⁴ և մի շարք այլ լրատվամիջոցների:

9 Արցախի հանրային հեռուստատեսության «Ռոջույն Արցախ» հաղորդաշար, 11 դեկտեմբերի, 2017թ., հղում՝ <https://youtu.be/GQhliCnph54>, 17:52 րոպեից (վերջին մուտքը՝ 23 մարտի, 2018թ.):

10 «Երկիր մեղիա» հեռուստաընկերության «Երկրի հարցը» հաղորդաշար, «Արցախում ռազմական դրությունը չի սահմանափակում մարդու իրավունքները», 15 դեկտեմբերի, 2017թ., հղում՝ <http://yerkirmedia.am/haxordumner/?list=PLaidpbWcSRG62CYGHnA6i5H3fh55C1stx&id=TGMBkrZlYJ8> (վերջին մուտքը՝ 23 մարտի, 2018թ.):

11 «Առաջին լրատվական», «Արցախը միայն Սպարտա չէ. Աշխարհին պետք է ճիշտ ներկայացնել մեր խնդիրները», 25 մարտի, 2017թ., հղում՝ <http://www.1in.am/2113982.html> (վերջին մուտքը՝ 23 մարտի, 2018թ.):

12 «Առաջին լրատվական», «Չպետք է փորձենք երևալ ավելին, քան կանք», 19 հուլիսի, 2017թ., հղում՝ <http://www.1in.am/2177330.html> (վերջին մուտքը՝ 23 մարտի, 2018թ.):

13 «Միվիլներ»-ի վերլուծական թողարկում, «Մարդու իրավունքները Արցախում. Ռուբեն Մելիքյան» 05 մայիսի, 2017թ., հղում՝ <https://www.civilnet.am/news/2017/05/05/%D5%84%D5%A1%D6%80%D5%A4%D5%B8%D6%82-%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8->

4.3. ԱՀ Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքի վարումը շարունակում է մնալ հասարակայնության հետ կապերի զարգացմանն ուղղված գործունեության կարևոր բաղադրիչ:¹⁵

Հաշվետու տարում Աշխատակազմը հրապարակել է ավելի քան 50 մամուլի հաղորդագրություն, որոնք լայնորեն տարածվել են զանգվածային լրատվության միջոցներով:

Էապես ակտիվացել է սոցիալական ցանցերի միջոցով հանրային հաղորդակցությունը: Թվիթերյան¹⁶ և ֆեյսբուքյան¹⁷ պաշտոնական էջերին բաժանորդագրված օգտատերերի թիվը մի քանի անգամ աճել է: Այդ էջերը կիրառվում են հանրության հետ երկկողմանի կապի ապահովման նպատակով:

4.4. Հաշվետու տարում Պաշտպանը և Աշխատակազմի աշխատակիցներն այցելություններ են կատարել համալսարաններ,¹⁸ դպրոցներ,¹⁹ դպրոցական

%D4%B1%D6%80%D6%81%D5%A1%D5%AD%D5%B8%D6%82%D5%B4%E2%80%A4-
%D5%8C%D5%B8%D6%82%D5%A2%D5%A5%D5%B6-
%D5%84%D5%A5%D5%AC%D5%AB%D6%84%D5%B5%D5%A1%D5%B6/313830 (վերջին մուտքը՝ 23 մարտի, 2018թ.):

14 «Արարատ» հեռուստաընկերության «Հայլուր-գրույց» հաղորդաշար, ««Հայլուր-գրույց»-ի հյուրն է Արցախի Մարդու իրավունքների պաշտպան Ռուբեն Մելիքյանը», 24 հունիսի, 2017թ., հղում՝ <https://www.youtube.com/watch?v=5hsyiHzoQ3s>(վերջին մուտքը՝ 28 մարտի, 2018թ.):

15 Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, հղում՝ <http://ombudsnkr.am/>

16 Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական թվիթերյան էջ, “Artsakh Ombudsman,” հղում՝ https://twitter.com/nkr_ombudsman

17 Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական ֆեյսբուքյան էջ, “Artsakh Ombudsman,” հղում՝ <https://www.facebook.com/ArtsakhOmbudsman/>

18 Արցախի հանրային հեռուստատեսություն, «Ապրիլյան պատերազմ. իրավաքաղաքական գնահատականներ», 02 մայիսի, 2017թ., հղում՝ <http://www.artsakhtv.am/am/news/show/11644> (վերջին մուտքը՝ 23 մարտի, 2018թ.):

19 Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «Պաշտպանն այցելել է թիվ 11 ավագ դպրոց», 18 ապրիլի, 2017թ., հղում՝ <http://ombudsnkr.am/news.php?nid=33> (վերջին մուտքը՝ 23 մարտի, 2018թ.):

ճամբարներ,²⁰ ինչպես նաև մի շարք հանդիպումներ են ունեցել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ՝ մարդու իրավունքների մասին գրույցներ ունենալով ուսանողների, աշակերտների և այլ խմբերի հետ:²¹

4.5. 2017թ. սեպտեմբերի 1-ին, Հաղորդի շրջանի Առաջամուղ գյուղի Ջաբել Եսայանի անվան միջնակարգ դպրոցում «Թուֆենկյան բարեգործական հիմնադրամի» կազմակերպած միջոցառման ժամանակ Պաշտպանը հայտարարել էր Մարդու իրավունքների վերաբերյալ աշակերտական շարադրությունների 2-րդ հանրապետական մրցույթը, որին մասնակցություն են ունեցել Արցախի դպրոցների 9-12-րդ դասարանների 54 աշակերտներ: Հարկ է ընդգծել, որ այս անգամ մրցույթի երկրորդ փուլ անցած 12 մասնակիցներից 10-ը Արցախի շրջանների դպրոցականներ էին: Մրցույթը նվիրված էր 20-րդ դարասկզբի ականավոր իրավապաշտպան, գրող և հրապարակախոս Ջաբել Եսայանի ժառանգությանը և կրում էր «Ինչու են մարդու իրավունքները կարևոր. իմ ապրած իրականությունը և Ջաբել Եսայանի փորձառությունը» խորագիրը:

Շարադրությունները գնահատելու նպատակով կազմավորվել էր մրցութային հանձնաժողով, որում ներգրավված էին հանրային գործիչներ Արցախից, Հայաստանի Հանրապետությունից և Սփյուռքից, այդ թվում՝ իտալահայ ականավոր գրող Անտոնիա Արսլանը, ԱՄՆ հայ իրավաբանական միության ներկայացուցիչ Գարո Ղազարյանը, Ամերիկայի հայկական համագումարի ներկայացուցիչ Արփի Վարդանյանը, Արցախի

20 Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «Պաշտպանի այցելել է Գիշիի դպրոցական ճամբար», 08 օգոստոսի, 2017թ., հղում՝ <http://ombudsnkr.am/news.php?nid=74> (վերջին մուտքը՝ 23 մարտի, 2017թ.):

21 Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «Պաշտպանը հանդիպել է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ», 14 ապրիլի, 2017թ., հղում՝ <http://ombudsnkr.am/news.php?nid=32> (վերջին մուտքը՝ 28 մարտի, 2018թ.):

Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ: Մրցութային հանձնաժողովի նախագահը ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանն էր:²²

Մրցութի արդյունքներն ամփոփվել են դեկտեմբերի 10-ին՝ Մարդու իրավունքների միջազգային օրը: Առաջին, երկրորդ և երրորդ մրցանակային տեղերը զբաղեցրած մասնակիցները պարգևատրվել են արժեքավոր նվերներով, իսկ եզրափակչի մյուս 9 մասնակիցները ստացել են հատուկ մրցանակներ տարբեր գործիչների ու կառույցների կողմից:

Մրցութի գործընկերներն էին «Թուֆենկյան բարեգործական հիմնադրամը» և ԱՄՆ-ում գործող «Հայկական հետազոտությունների ազգային ասոցացիան» (NAASR):²³

22 Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «Պաշտպանը հայտարարել է մարդու իրավունքների վերաբերյալ երկրորդ ամենամյա մրցույթը՝ նվիրված Զաբել Եսայանի ժառանգությանը», 12 սեպտեմբերի, 2017թ., հղում՝ <http://ombudsokr.am/news.php?nid=36> (վերջին մուտքը՝ 28 մարտի, 2018թ.):

23 Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «Ամփոփվեցին մարդու իրավունքներին նվիրված երկրորդ աշակերտական մրցութի արդյունքները», 11 դեկտեմբերի, 2017թ., հղում՝ <http://ombudsokr.am/announcement.php?nid=72> (վերջին մուտքը՝ 28 մարտի, 2018թ.):

Բաժին 5. Պաշտպանի համագործակցությունը քաղաքացիական հասարակության հաստատությունների հետ

5.1. ԱՀ Մարդու իրավունքների պաշտպանը մշտապես իր պատրաստակամությունն է հայտնել արդյունավետ համագործակցել հասարակական կազմակերպությունների հետ: Կարևորելով քաղաքացիական հասարակության դերը՝ հաշվետու ժամանակահատվածում Պաշտպանը շարունակել է համագործակցությունն Արցախում գործունեություն ծավալող այն հասարակական կազմակերպությունների հետ, որոնք ունեն իրավապաշտպան ուղղվածություն, զբաղվում են ազգային փոքրամասնությունների, երեխաների, կանանց, փախստականների, հաշմանդամների, անհայտ կորածների և այլ խմբերի իրավունքների պաշտպանության հարցերով:

5.2. 2017թ. ընթացքում Պաշտպանը պարբերաբար իրականացրել է բաց հանդիպումներ, որոնց ժամանակ հաշվետվություն է ներկայացրել նախորդ տարվա գործունեության վերաբերյալ, մարդու իրավունքներին վերաբերող առանձին հարցերի շուրջ խորհրդակցել է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ, քննարկել է նրանց կողմից բարձրացված հարցերը:²⁴

5.3. Քաղաքացիական հասարակության հետ կապերը խորացնելուն էին ուղղված Պաշտպանի և Աշխատակազմի պատասխանատուի այցելությունները հասարակական կազմակերպությունների գրասենյակներ: Մասնավորապես, այցելություններ են եղել «ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միություն», «ԼՂՀ զոհված ազատամարտիկների հարազատների միություն», «ԼՂՀ փախստականների միություն»,

²⁴ «Արցախթայմս», «Մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարության ընդունումը՝ անհրաժեշտություն է», 15 ապրիլի, 2017թ., հղում՝ <http://artsakhtimes.am/%D5%B4%D5%A1%D6%80%D5%A4%D5%B8%D6%82-%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%BA%D5%A1%D5%B7%D5%BF%D5%BA%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%BC/> (վերջին մուտքը՝ 24 մարտի, 2018թ.):

«Մայրություն», «Արցախի ժողովրդավարական դիվանագիտության ինստիտուտ», «Հայ օգնության միության Արցախի միավորում», «ԼՂՀ Արհմիությունների ֆեդերացիա», «Քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոն» կազմակերպություններ:

Այցելությունների ընթացքում կազմակերպությունների ներկայացուցիչների հետ քննարկվել են հասարակական կազմակերպությունների գործունեությանն առնչվող, ինչպես նաև՝ հանդիպումների մասնակիցներին հետաքրքրող այլ հարցեր:

5.4. Հաշվետու տարում Պաշտպանի աշխատակազմը համագործակցել է նաև հայաստանյան մի շարք ոչ-կառավարական կազմակերպությունների հետ, ինչպիսիք են «Քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոն», «Դեմոկրատիան այսօր», «Եվրասիա համագործակցության հիմնադրամ» ՀԿ-ները, «Դասավանդի՛ր, Հայաստան» հիմնադրամը, «Ճամփորդ հասարակական հիմնադրամը»:

Բաժին 6. Արտաքին փոխգործակցությունը

6.1. Համագործակցությունը ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի հետ

6.1.1. ԱՀ Մարդու իրավունքների պաշտպանը շարունակել է ակտիվ համագործակցությունը ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի հետ՝ համադրելով աշխատանքները միջազգային հարթակներում, կազմակերպելով պարբերական փոխայցելություններ, փորձի փոխանակում և այլն:

6.1.2. Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանների համագործակցության դրսևորումներից է եղել քննարկման նպատակով դիմումների փոխանցումը:

Օրինակ՝ երկրից բացակայելու հիմքով 18 ամսվա կենսաթոշակ չստացած քաղաքացին դիմել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին: Ուսումնասիրելով դիմումում առկա տվյալները՝ պարզվել է, որ քաղաքացին Արցախի Հանրապետության կենսաթոշակատու է, և դիմումը վերահասցեագրվել է ԱՀ Մարդու իրավունքների պաշտպանին: Երկու Պաշտպանների աշխատակազմերի համատեղ աշխատանքի արդյունքում, քաղաքացին ստացել է օրենքով իրեն հասանելիք կենսաթոշակը:²⁵

6.1.3. ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը հետևողականորեն օժանդակել է ԱՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությանը՝ նպաստելով զեկույցների և այլ փաստաթղթերի տարածմանը, աջակցելով միջազգային կապերի հաստատման և ամրապնդման գործում, միջազգային գործընկերների հետ հանդիպումներում բարձրաձայնելով Արցախի քաղաքացիների իրավունքների պաշտպանությանն առնչվող հիմնախնդիրների մասին:

25 Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «Հայաստանի և Արցախի մարդու իրավունքների պաշտպանների համատեղ աշխատանքի արդյունքում քաղաքացին ստացել է 18 ամսվա կենսաթոշակը», 08 սեպտեմբերի, 2017թ., հղում՝ <http://www.ombuds.am/media/hamagortsakutyun-kensatoshak.html> (վերջին մուտքը՝ 28 մարտի, 2018թ.):

6.1.4. Մարդու իրավունքների միջազգային օրվա առթիվ՝ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գլխավորած պատվիրակությունն այցելել է Արցախ: Այցի շրջանակներում կայացել է Արցախի դպրոցների 9-12-րդ դասարանների աշակերտների համար նախապես հայտարարված «Ինչո՞ւ են մարդու իրավունքները կարևոր. իմ ապրած իրականությունը և Ջաբել Եսայանի փորձառությունը» խորագրով մրցույթի արդյունքների ամփոփումը:²⁶

Այցի շրջանակներում մարդու իրավունքների երկու պաշտպանները նաև հանրային հանդիպում են ունեցել Արցախի փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ասոցիացիայի ներկայացուցիչների հետ:

6.2. Համագործակցությունը Սփյուռքի կառույցների հետ

6.2.1. Հաշվետու տարում Պաշտպանը շարունակել և խորացրել է Սփյուռքի մի շարք կառույցների հետ համագործակցությունը՝ կազմակերպելով այցեր սփյուռքյան որոշ գաղթօջախներ և իրագործելով համատեղ ծրագրեր գործընկեր կազմակերպությունների հետ:

6.2.2. Պաշտպանը, ԱՄՆ Արևելյան ափի Հայ Դատի գրասենյակի հրավերով, 2017թ. Մարտի 8-17-ը այցելել է Միացյալ Նահանգներ: Նյու-Յորքում, Բոստոնում, Փրովիդենսում, Վաշինգթոնում Պաշտպանն ունեցել է 33 միջոցառում, այդ թվում՝ յոթ հրապարակային ելույթ ակադեմիական հանրության, ինչպես նաև՝ Սփյուռքի տարբեր շրջանակների առջև:²⁷

26 Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, ««Իրավունքները պետք է լինեն պաշտպանված՝ անկախ տարածքի կարգավիճակից»։ Մարդու իրավունքների միջազգային օրը նշվել է Արցախում», 11 դեկտեմբերի, 2017թ., հղում՝ <http://www.ombuds.am/media/mardu-iravunqneri-mijzagayin-orn-arcaxum.html> (վերջին մուտքը՝ 28 մարտի, 2018թ.):

27 Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «Շարունակվում է Պաշտպանի աշխատանքային այցը Միացյալ Նահանգներ», 16 մարտի, 2017թ., հղում՝ <http://ombudsokr.am/news.php?nid=30> (վերջին մուտքը՝ 28 մարտի, 2018թ.):

6.2.3. Հաշվետու տարում Պաշտպանը համագործակցել է նաև ԱՄՆ «Հայ իրավաբանական միության» (Armenian Bar Association) հետ, որի հրավերով՝ հունիսի 9-14-ը նա այցելել է Քալիֆորնիա:

Պաշտպանը մասնակցել է միության 28-րդ տարեկան համաժողովին, որի շրջանակներում տեղի է ունեցել Արցախում մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ առանձին պանելային քննարկում:²⁸

Այցելության արդյունքներից մեկն այն էր, որ Պաշտպանի մասնակցությամբ և Արցախի պետական համալսարանի, Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի և ԱՄՆ «Հայ իրավաբանական միության» միջև համագործակցության արդյունքում Արցախի պետական համալսարանում գործարկվել է իրավաբանական կլինիկա:²⁹

6.2.4. Այցելելով Հունգարիա՝ միջազգային համաժողովի մասնակցելու նպատակով՝ Պաշտպանը նաև մայիսի 10-ին հանդիպումներ է ունեցել տեղի հայկական համայնքի ներկայացուցիչների հետ: Նա, մասնավորապես, Հայկական մշակութային կենտրոնում ճանաչողական հանդիպումներ է ունեցել Հունգարիայի հայկական ինքնավարության ղեկավարության, հայ համայնքի անդամների, ինչպես նաև՝ Հունգարիայի խորհրդարանում հայկական ինքնավարության ներկայացուցիչ Թամաշ Թուրգյանի հետ, հարցազրույց է տվել Հունգարիայի հանրային ռադիոյով հեռարձակվող հայկական ինքնավարության հաղորդմանը: Անդրադառնալով մարդասպան Ռամիլ Սաֆարովի արտահանձնման խնդրին՝ Պաշտպանն ընդգծել է դրա պատճառական կապն Ապրիլյան պատերազմում Ադրբեջանի զինված ուժերի կատարած վայրագությունների հետ: Պաշտպանը նշել է նաև, որ Արցախում հիշում են Հունգարիայի այն հազարավոր

28 Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «Պաշտպանի այցելել է Միացյալ Նահանգներ՝ ԱՄՆ «Հայ իրավաբանական միության» հրավերով», 17 հունիսի, 2017թ., հղում՝ <http://ombudsnkr.am/news.php?nid=24> (վերջին մուտքը՝ 28 մարտի, 2018թ.):

29 Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «Պաշտպանի մասնակցությամբ՝ բացվել է իրավաբանական կլինիկա», 01 նոյեմբերի, 2017թ., հղում՝ <http://ombudsnkr.am/news.php?nid=38> (վերջին մուտքը՝ 28 մարտի, 2018թ.):

քաղաքացիներին, ովքեր բողոքի ձայն բարձրացրեցին Սաֆարովին արտահանձնելու որոշման դեմ:³⁰

6.3. Միջազգային համագործակցությունը

6.3.1. Ինչպես նախորդ տարիներին, հաշվետու տարում նույնպես, Մարդու իրավունքների պաշտպանը կարևորել է միջազգային կազմակերպությունների, այլ երկրների օմբուդսմենների հաստատությունների և մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող այլ կառույցների հետ համագործակցությունը՝ գործնական քայլեր կատարելով նոր կապերի ձևավորման և առկա կապերի ամրապնդման ուղղությամբ:

6.3.2. Հաշվետու ժամանակահատվածում ԱՀ Մարդու իրավունքների պաշտպանը և Աշխատակազմի աշխատակիցները մասնակցել են մի շարք կոնֆերանսների, սեմինար-քննարկումների և այլ բնույթի միջազգային միջոցառումների, որոնց ընթացքում ձեռք են բերվել բազում համաձայնություններ՝ փորձի փոխանակման, միջազգային իրավապաշտպան կառույցներում ԱՀ Մարդու իրավունքների պաշտպանի դերի բարձրացման, ինչպես նաև՝ համագործակցության այլ ձևերի վերաբերյալ:

6.3.3. Պաշտպանը խորացրել է համագործակցությունը «Եվրոպական օմբուդսմենի ինստիտուտի» (European Ombudsman Institute) հետ, որը հանդիսանում է մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող միջազգային կառույցների և այլ երկրների օմբուդսմենների հետ Արցախի Մարդու իրավունքների պաշտպանի համագործակցության կարևոր հարթակ:

Փետրվարի 15-ին Վիեննա քաղաքում կայացել է ԱՀ և ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանների և «Եվրոպական օմբուդսմենի ինստիտուտի» գլխավոր քարտուղարի աշխատանքային հանդիպումը: «Եվրոպական օմբուդսմենի ինստիտուտի» գլխավոր քարտուղարը ներկայացրել է ԵՕԻ ընթացիկ գործունեությունը և առաջիկա ծրագրերը,

30 Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «Պաշտպանը Բուդապեշտում մասնակցել է միջազգային համաժողովի», 11 մայիսի, 2017թ., հղում՝ <http://ombudsnkr.am/announcement.php?nid=65> (վերջին մուտքը՝ 28 մարտի, 2018թ.)

իսկ ԱՀ Մարդու իրավունքների պաշտպանը՝ ԱՀ-ում մարդու իրավունքների պաշտպանության վիճակը, առկա մարտահրավերները և դրանց հաղթահարման ուղիները:³¹

6.3.4. Սեպտեմբերի 23-ին Պաշտպանը Բուխարեստում մասնակցել է «Եվրոպական օմբուդսմենի ինստիտուտի» գլխավոր վեհաժողովին: Նա մասնակցել է նաև վեհաժողովի ղեկավար մարմինների ընտրությանը՝ քվեարկելով յուրաքանչյուր մասնակցի համար նախատեսված անհատական քարտով: Վեհաժողովի ընթացքում Պաշտպանը հանդես է եկել հարցադրումներով, ինչպես նաև ձեռք բերել պայմանավորվածություններ միջազգային գործընկերների հետ՝ կապերի հետագա ամրապնդման և այլ երկրներում տարբեր միջոցառումների մասնակցելու վերաբերյալ:³²

6.3.5. Մարտի 8-17-ը տեղի ունեցած ԱՄՆ այցի շրջանակներում, Պաշտպանը մի շարք հանդիպումներ է ունեցել ամերիկյան իրավապաշտպան, փորձագիտական և քաղաքական շրջանակների հետ՝ նրանց հետ քննարկելով Ադրբեջանի կողմից Արցախի բնակչության իրավունքների ուղղակի և անուղղակի կոպիտ խախտման դեպքերը, դրանց կանխարգելման ու վերացման, ինչպես նաև՝ ընդհանրապես համագործակցության հետ կապված մի շարք հարցեր: Կոնգրեսականներ Դեվիդ Վալդաույի, Ադամ Շիֆի (Քալիֆորնիա), Ջիմ Սըքզավլըրնի (Մասաչուսեթս) և Դեյվիդ Միսիլինիի (Ռոդ Այլընդ) հետ հանդիպումներում Պաշտպանը ներկայացրել է Ապրիլյան պատերազմի ժամանակ ադրբեջանական զինված ուժերի կատարած վայրագությունների վերաբերյալ ԱՀ ՄԻՊ-ի փաստահավաք գործունեության

31 Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «Պաշտպանը հանդիպել է «Եվրոպական օմբուդսմենի ինստիտուտի» գլխավոր քարտուղարի հետ», 15 փետրվարի, 2017թ., հղում՝ <http://ombudsnkr.am/announcement.php?nid=61> (վերջին մուտքը՝ 28 մարտի, 2018թ.):

32 Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «Պաշտպանը Բուխարեստում մասնակցել է «Եվրոպական օմբուդսմենի ինստիտուտի» գլխավոր վեհաժողովին», 23 սեպտեմբերի, 2017թ., հղում՝ <http://ombudsnkr.am/announcement.php?nid=73> (վերջին մուտքը՝ 28 մարտի, 2018թ.):

արդյունքները:³³ Հատկանշական է, որ այդ օրերին Պաշտպանը հարցազրույց է տվել հայտնի «Արտաքին քաղաքականություն» (Foreign Policy) հանդեսին՝ շեշտադրելով, որ անկախ կարգավիճակից՝ Արցախի բնակչության իրավունքները պետք է պաշտպանված լինեն:³⁴

6.3.6. Փետրվարի 14-ին Պաշտպանը, Հայկական բարեգործական ընդհանուր միության Եվրոպայի մասնաճյուղի հրավերով, աշխատանքային այցով մեկնել է Ստրասբուրգ: Նա ունեցել է հանդիպումներ իրավապաշտպան համայնքի ներկայացուցիչների, ինչպես նաև խորհրդարանականների հետ: Ստրասբուրգում անցկացվող Եվրոպական խորհրդարանի նստաշրջանի շրջանակներում տեղի է ունեցել Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան Ռուբեն Մելիքյանի և Եվրոպական խորհրդարանի պատգամավոր Ֆրանկ Էնգելի մամուլի ասուլիսը:

Պաշտպանը հանդիպումների և մամուլի ասուլիսի ժամանակ հակիրճ ներկայացրել է Ապրիլյան պատերազմի ընթացքում Ադրբեջանի կատարած վայրագությունների վերաբերյալ իր հաստատության կողմից իրականացված փաստահավաք գործունեության արդյունքները, ինչպես նաև շեշտադրել է Ադրբեջանի կողմից բլոգեր Ալեքսանդր Լապշինին հետապնդելու և ազատ խոսքը ճնշելու ջանքերի վտանգավորությունն ու անթույլատրելիությունը: Նա նաև ընդգծել է Արցախում եվրոպական կառույցների ներգրավման անհրաժեշտությունը, որը կարող է դառնալ նաև Ադրբեջանի հետագա ոչ իրավաչափ վարքագծի կանխարգելման միջոց:³⁵

33 Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «Շարունակվում է Պաշտպանի աշխատանքային այցը Միացյալ Նահանգներ», 16 մարտի, 2017թ., հղում՝ <http://ombudsnkr.am/news.php?nid=30> (վերջին մուտքը՝ 28 մարտի, 2018թ.):

34 Foreign Policy, “Azerbaijan’s President Calls for Renewed Nagorno-Karabakh Talks. It’s Not That Simple. Are talks possible when hearing the other side is so difficult?” 15 March, 2017, <http://foreignpolicy.com/2017/03/15/azerbaijans-president-calls-for-renewed-nagorno-karabakh-talks-its-not-that-simple/> (վերջին մուտքը՝ 23 մարտի, 2018թ.):

35 Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «Պաշտպանն այցելել է Ստրասբուրգ և մամուլի ասուլիս ունեցել Եվրախորհրդարանում», 14 փետրվարի, 2017թ., հղում՝ <http://ombudsnkr.am/news.php?nid=76> (վերջին մուտքը՝ 28 մարտի, 2018թ.):

6.3.7. Պաշտպանը, Եվրոպա այցի շրջանակներում, փետրվարի 16-ին, աշխատանքային այցով մեկնել է Բրյուսել: Նա հանդիպումներ է ունեցել իրավապաշտպան համայնքի ներկայացուցիչների, խորհրդարանականների, ինչպես նաև՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:³⁶

6.3.8. Հոկտեմբերի 20-ին, Պաշտպանը Բրյուսելում մասնակցել է «Հայաստանի եվրոպացի բարեկամներ» կազմակերպության կողմից նախաձեռնված կլոր սեղան-քննարկմանը, որին մասնակցում էին նաև Եվրոպայի փորձագիտական և իրավապաշտպան հանրության ներկայացուցիչներ: Պաշտպանն իր ելույթում ընդգծել է միջազգային իրավապաշտպան համայնքի հետ հարաբերությունների հաստատման և զարգացման երկուստեք կարևորությունը, ինչպես նաև ներկայացրել է Արցախում մարդու իրավունքների պաշտպանության ընդհանուր վիճակը, առկա մարտահրավերները և դրանց հաղթահարմանն ուղղված քայլերը: Պաշտպանը, մասնավորապես, կարևորել է ԱՀ Նախագահի 2017-2020թթ. ծրագիրը, որում ամրագրվել է ԱՀ-ում Մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունն մշակելու և կենսագործելու ԱՀ քաղաքական իշխանության հանձնառությունը: Պաշտպանը նշել է, որ ռազմավարության մշակման հարցում ակնկալում է լայն համագործակցություն միջազգային իրավապաշտպան համայնքի հետ:³⁷

6.3.9. Հունգարիա վերոնշյալ այցի շրջանակներում, Պաշտպանը, մայիսի 11-ին, Բուդապեշտում մասնակցել է «Ռազմական հակամարտությունների գոհերը միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների միջազգային իրավունքի հատման կետում» խորագրով միջազգային համաժողովին: Համաժողովը

36 Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «Պաշտպանը Բրյուսելում մի շարք հանդիպումներ է ունեցել», 16 փետրվարի, 2017թ., հղում՝ <http://ombudsokr.am/news.php?nid=75> (վերջին մուտքը՝ 28 մարտի, 2018թ.):

37 Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «Արցախի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանը Բրյուսելում մասնակցել է «Հայաստանի եվրոպացի բարեկամների» հրավիրած կլոր սեղանին», 20 հոկտեմբերի, 2017թ., հղում՝ <http://ombudsokr.am/announcement.php?nid=68> (վերջին մուտքը՝ 28 մարտի, 2018թ.):

կազմակերպվել էր Հունգարիայի և Շվեյցարիայի արտաքին գործերի գերատեսչությունների կողմից:³⁸

6.3.10. Օգոստոսի 31-ին Պաշտպանը, Կանադայի խորհրդարանի պատգամավորներ Թոնի Քլեմենթի և Ռեյչլ Հարդերի, «Մեկ ազատ աշխարհ միջազգային» (One Free World International) իրավապաշտպան կազմակերպության նախագահ Մեջեդ Էլ Շաֆիի և Կանադայի Հայ Դատի Հանձնախմբի ներկայացուցիչ Սևակ Պելեանի հետ, այցելել է Թալիշ գյուղ: Կանադայից ժամանած պատվիրակությունը տեղում ծանոթացել է 2016թ. Ապրիլյան պատերազմի ընթացքում ադրբեջանական զինված ուժերի իրագործած վայրագությունների փաստերին, որոնք արձանագրված են Արցախի օմբուդսմենի հաստատության կատարած փաստահավաքությամբ:³⁹

6.3.11. 2017թ. ընթացքում Պաշտպանը հանդիպումներ է ունեցել նաև Արցախի Սահմանադրական հանրաքվեին դիտորդական առաքելություն իրականացնող միջազգային մի խումբ դիտորդների, «Ղարաբաղյան հակամարտության գոտում անհայտ կորածների որոնման և պատանդների ու գերիների ազատ արձակման միջազգային աշխատանքային խմբի» համանախագահների,⁴⁰ Քալիֆորնիա նահանգի խորհրդարանականների պատվիրակության⁴¹ և մի շարք այլ միջազգային պատվիրակությունների հետ:

38 Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «Պաշտպանը Բուդապեշտում մասնակցել է միջազգային համաժողովի», 11 մայիսի, 2017թ., հղում՝ <http://ombudsnkr.am/announcement.php?nid=65> (վերջին մուտքը՝ 28 մարտի, 2018թ.):

39 Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «Պաշտպանը կանադացի խորհրդարանականների ու իրավապաշտպանի հետ այցելել է Թալիշ գյուղ», 01 սեպտեմբերի, 2017թ., հղում՝ <http://ombudsnkr.am/news.php?nid=35> (վերջին մուտքը՝ 28 մարտի, 2018թ.):

40 Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «Արցախի ՄԻՊ-ն ընդունել է «Ղարաբաղյան հակամարտության գոտում անհայտ կորածների որոնման և պատանդների ու գերիների ազատ արձակման միջազգային աշխատանքային խմբի» համանախագահներին», 19 հուլիսի, 2017թ., հղում՝ <http://ombudsnkr.am/news.php?nid=25> (վերջին մուտքը՝ 28 մարտի, 2018թ.):

41 Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «Պաշտպանը հանդիպել է Արցախում գտնվող ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի խորհրդարանականների պատվիրակությանը», 09 հոկտեմբերի, 2017թ., հղում՝ <http://ombudsnkr.am/news.php?nid=37> (վերջին մուտքը՝ 28 մարտի, 2018թ.):

6.3.12. Վերոնշյալ արտասահմանյան այցերի և Արցախ այցելած միջազգային պատվիրակությունների հետ հանդիպումների ընթացքում Պաշտպանը գործուն քայլեր է կատարել 2016թ. Ապրիլյան պատերազմում Ադրբեջանի վայրագությունների վերաբերյալ ԱՀ Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցների հանրայնացման ուղղությամբ: Բացի դրանից, Պաշտպանի ակտիվ ջանքերի շնորհիվ՝ մի շարք միջազգային հայտնի կառույցներ իրենց հրապարակումներում օգտագործել են նշյալ զեկույցների արդյունքները՝ պաշտոնապես հղում անելով ԱՀ Մարդու իրավունքների պաշտպանի հրապարակած փաստաթղթերին: Ուշագրավ են ԱՀ ՄԻՊ-ի զեկույցներին հղում կատարելու դեպքերը, մասնավորապես, «Ազատության տուն» (Freedom House) միջազգային իրավապաշտպան կազմակերպության՝ անցումային պետությունների 2017թ.՝ Հայաստանի Հանրապետության վերաբերյալ զեկույցի կողմից,⁴² «Միջազգային ճգնաժամային խմբի» մի շարք հրապարակումների կողմից,⁴³ իսկ «Շանթ» հեռուստաընկերության աշխատակցի վիրավորվելու դեպքի առթիվ Պաշտպանը մեկնաբանություն է տվել «Լրագրողների պաշտպանության կոմիտե» միջազգային կազմակերպությանը:⁴⁴

6.3.13. Պաշտպանը կարևորել է նաև Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հետ համագործակցությունը: Աշխատակազմի՝ մասնագիտական գործունեություն իրականացնող աշխատակիցները մի քանի անգամ մասնակցել են ԿԻՄԿ-ի կողմից կազմակերպված դասընթացներին՝ նվիրված միջազգային մարդասիրական իրավունքին:

42 Freedom House, Nations in Transit 2017, Armenia, <https://freedomhouse.org/report/nations-transit/2017/armenia> (վերջին մուտքը՝ 28 մարտի, 2018թ.):

43 International Crisis Group, “Nagorno-Karabakh’s Gathering War Clouds,” 244, Europe and Central Asia, 1 June, 2017, <https://www.crisisgroup.org/europe-central-asia/caucasus/nagorno-karabakh-azerbaijan/244-nagorno-karabakh-gathering-war-clouds> (վերջին մուտքը՝ 28 մարտի, 2018թ.):

44 Committee to Protect Journalists, “TV cameraman wounded in disputed Nagorno-Karabakh region,” 19 May, 2017, <https://cpj.org/2017/05/tv-cameraman-wounded-in-disputed-nagorno-karabakh-.php#> (վերջին մուտքը՝ 28 մարտի, 2018թ.):

Եզրափակիչ նկատառումներ

7.1. Հաշվետու տարում Արցախի Հանրապետությունում մարդու իրավունքների կարևորագույն խնդիրը եղել է Ադրբեջանի 2016 թվականի ապրիլյան ագրեսիայի հետևանքով գրանցված մարդու հիմնարար իրավունքների զանգվածային խախտումներին անբավարար միջազգային արձագանքը: Պաշտպանը ջանքեր է գործադրել՝ ուղղված միջազգային իրավապաշտպան հանրության տարբեր կառույցներին խնդիրը հասու դարձնելուն:

7.2. Մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության ոլորտում մարտահրավերներից է Արցախում իրավապաշտպան կարողությունների զարգացման ցածր մակարդակը, որն առաջին հերթին պայմանավորված է արտաքին-քաղաքական գործոններով: Հաշվետու տարում Պաշտպանը ջանքեր է գործադրել՝ ուղղված խնդիրը բարձրաձայնելուն և լուծման հարցում առաջընթաց ապահովելուն: Հատկապես ողջունելի է Արցախում իրավապաշտպան կարողությունների զարգացման հիմնահարցին ցուցաբերվող՝ հայկական Սփյուռքի առանձին կառույցների աճող ուշադրությունը:

7.3. Ներքին մարտահրավերներից առավել ընդհանրականը մարդու իրավունքների ոլորտում պետության ընդհանուր քաղաքականությունն ամրագրող ռազմավարական փաստաթղթի և գործողությունների ծրագրի բացակայությունն է: Հաշվի առնելով այդպիսի փաստաթղթեր մշակելու և գործարկելու վերաբերյալ ԱՀ գործադիր իշխանության բարձրագույն մարմինների դրսևորած քաղաքական կամքը՝ Մարդու իրավունքների պաշտպանը պատրաստակամություն է հայտնում, քաղաքացիական հասարակության ինստիտուտների և փորձագիտական շրջանակների հետ համատեղ, մասնակցություն ունենալ մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարություն մշակելու և այն արդյունավետորեն գործարկելու գործընթացին:

7.4. Արցախի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարության մշակման համար լավ հենք կարող է դառնալ մարդու իրավունքների

ոլորտում հիմնարար փաստաթղթերից մեկի՝ «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» 1966թ. միջազգային դաշնագրի⁴⁵ 40-րդ հոդվածին համապատասխան՝ դաշնագրով ճանաչվող իրավունքների կենսագործման ուղղությամբ Արցախի Հանրապետության կողմից ձեռնարկված միջոցների և այդ իրավունքների ապահովման բնագավառում ձեռք բերված առաջադիմության մասին զեկույցի մշակումը և հրապարակումը:

7.5. Սույն Հաղորդմամբ Պաշտպանը իրավասու մարմինների ուշադրությունն է հրավիրել ԱՀ օրենսդրության մեջ և իրավակիրառական պրակտիկայում առկա որոշակի խնդիրների վրա (արդար դատաքննության իրավունքի, սեփականության իրավունքի, անձնական ազատության իրավունքի և այլ ոլորտներում): Պաշտպանի հաստատությունը պատրաստակամություն է հայտնում արձանագրված և ցանկացած այլ ընդհանրական խնդիրների լուծման նպատակով ակտիվորեն գործակցել ինչպես ԱՀ պետական իրավասու մարմինների, այնպես էլ քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ:

⁴⁵ ԼՂՀ ԳԽ նախագահության 23.11.1992թ. N ՆԽ-0131-1 որոշում, ԼՂՀ Գերագույն խորհրդի 23.11.1994թ. N ԹՆ-0098-1 որոշում